

<Մասնագիտական դասընթացներ Ասկերանում>, <Բերդ-պրես>, 27.09.2013թ.



Սեպտեմբերի 19-ին Ասկերանում ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար կազմակերպվեցին մասնագիտական դասընթացներ, որոնց նպատակն է ընտրությունների անցկացման համար համապատասխան գիտելիքների ուսուցումը և հանձնաժողովականների աշխատանքային ունակությունների կատարելագործումը: Ներկա էին ԿՀՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը, տեղակալ Եղիշ Արզումանյանը, քարտուղար Ռայա Նազարյանը, Ասկերանի ՏարՀՀ նախագահ Կարեն Միրզոյանը: Ողջույնի խոսքով հանդես գալով՝ Կարեն Միրզոյանը

կարևորեց տեղամասային ընտրական հանձնաժողովների գործունեությունը: ՏՀՀ-ներն այն մարմիններն են, որոնք անմիջականորեն ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի ապահովումը: ՏՀՀ-ներում են տեղի ունենում ընտրությունները և ամփոփվում քվեարկության արդյունքների հիման վրա ձևավորված ընտրությունների ընդհանուր արդյունքները: Ակնհայտ է, որ նման ուսուցումների կազմակերպումը մեծ նշանակություն ունի ընտրական գործընթացը պատշաճ մակարդակով անցկացնելու համար:

ԿՀՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը նախ շնորհակալություն հայտնեց ներկաներին միջոցառմանը մասնակցելու համար, ապա անդրադարձավ դասընթացներին.

-Մասնագիտական դասընթացների կազմակերպումն իր մեջ ներառում է մեծ բովանդակություն: Ուսումնասիրվում է ԼՂՀ Սահմանադրությունը, ԼՂՀ Ընտրական Օրենսգրքը, Ֆիրավական ակտերի մասին՝ ԼՂՀ օրենքը, ԿՀՀ որոշումները: Ընտրությունների հետ կապված բոլոր միջոցառումները, ներառյալ որոշումների ընդունումը պետք է անցկացվեն բաց և հրապարակային: ՏՀՀ-ների ցանկացած քայլ կամ գործողություն կապված տեղամասային կենտրոնում քվեարկության անցկացման և արդյունքների ամփոփման հետ պետք է բխի արդարության և օրինականության, անաչառության և չեզոքության, կարգապահության և բարեխղճության, ազնվության և գործողությունների թափանցիկության սկզբունքներից: Առավել կարևոր է, որպեսզի հանձնաժողովի անդամներն իրենց աշխատանքները կազմակերպելիս ապահովեն քաղաքական զսպվածություն՝ երբևէ ցույց չտալով, թե որ թեկնածուի կողմնակիցն են իրենք: Հույս եմ հայտնում, որ այսօրվա դասընթացները կունենան արդյունավետություն և վկայական ստացած բոլոր անդամները բարձր մակարդակ կցուցաբերեն հետագա ընտրությունների անցկացման ժամանակ:

Այնուհետև, ելույթ ունեցան ԿՀՀ տեղակալն ու քարտուղարը, որոնք կանգ առան ընտրական հանձնաժողովների աշխատանքների, անդամների լիազորությունների ու պարտականությունների վրա: Խոսվեց նաև գործավարության մատյանների մասին, որոնց ճիշտ լրացումն է ցույց տալիս հանձնաժողովի կատարած աշխատանքը:

Ներկաների ուշադրությանը ներկայացվեց նաև ուսուցողական տեսաֆիլմ:

Վերջում կազմակերպվեց ստուգաքոչ, որին մասնակցեցին շրջանի 10 համայնքներից ժամանած ներկայացուցիչներ՝ ընդհանուր առմամբ 90 քաղաքացի, 65-ը որակավորման ստուգաքոչ (այդ թվում 9-ը ՏարՀՀ անդամ), 25 դիմումատու (հանձնաժողովի նոր անդամներ) մասնակցել է մասնագիտական դասընթացներին որպես ՏՀՀ անդամության թեկնածու:

Ավարտվեց մասնագիտական դասընթացների առաջին փուլը: Բոլոր անդամների մասնագիտական գիտելիքները և աշխատանքային ունակությունները գնահատվեցին բավարար: Մասնակից անդամները կստանան որակավորման վկայականներ:

Կարինե ԲԱՆՇԻՅԱՆ

<http://berd-press.info/2012-02-26-15-35-01/latestnews/361-2013-09-27-06-50-53>